

Հավելված 3

Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին

/ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյան/

Համաձայն 2018-2019 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանի՝ երկրորդ կիսամյակի ընթացքում նախատեսված են 28 պրակտիկաներ.

- առկա ուսուցում.
արտադրական (մանկավարժական)՝ 8 պրակտիկա,
ուսումնական՝ 6 պրակտիկա,
արտադրական՝ 6 պրակտիկա (քննահանուր՝ 20),
- հեռակա ուսուցում՝
արտադրական (մանկավարժական)՝ 2 պրակտիկա,
ուսումնական՝ 3 պրակտիկա,
արտադրական՝ 3 պրակտիկա (քննահանուր՝ 8):

Պրակտիկայի գործընթացը առկա ուսուցման համակարգում սկսվել է երկրորդ կիսամյակի դասապրոցներ սկսելուն զուգընթաց և մասնաճյուղի 274 ուսանողներ փետրվարի 11-ից գտնվել են պրակտիկայի մեջ:

Պրակտիկայի գործընթացը հեռակա ուսուցման համակարգում սկսվել է մարտի 25-ից և մասնաճյուղի 145 ուսանողներ մինչև ապրիլի 20-ը (կամ 26-ը) գտնվել են պրակտիկայի մեջ (ավարտված են 4-ը՝ ստուգարքները կրականացվեն ապրիլի 29-ին, մայիսի 2-ին, 3-ին):

1. Ստորագրված պայմանագրեր.

Պրակտիկաները կազմակերպելու համար Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի կողմից իրականացվել են հանդիպումներ Իջևանի և Դիլիջանի տարածաշրջաններում գործող դպրոցների, բանկերի, հյուրանոցատեստարանային համալիրների, թանգարանների և պրակտիկայի անցկացման այլ հաստատությունների ղեկավարների հետ, քննարկվել պրակտիկան տվյալ հաստատություններում կազմակերպելու հնարավորությունները, աշխատանքների կազմակերպման ձևերն ու եղանակները, պայմանագրեր կնքելու անհրաժեշտությունը: Հանդիպումների մի մասը կազմակերպվել են մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Ա.Ցուցուլյանի, կրթական ծրագրերի ղեկավարների և պրակտիկայի ղեկավարների մասնակցությամբ: Արդյունքում ստորագրվել են «Ուսանողների պրակտիկայի կազմակերպման մասին» մի շարք պայմանագրեր: Մանկավարժական պրակտիկաների համար պայմանագրեր են կնքվել Իջևանի Ս.Սարգսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցի, Իջևանի Ս.Սարտիրոսյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցի և «Դիլիջանի կենտրոնական դպրոց»-ի տնօրենների հետ, իսկ արտադրական պրակտիկաների համար՝ Ենոքավանի «Ապագա տուր» ՍՊԸ-ի, Իջևանի «Վահան և թոռներ» ՍՊԸ-ի, «ՀՀ ազգային արխիվի Տավուշի մարզային մասնաճյուղ» ՊՈԱԿ-ի, Դիլիջանի «Դոյակ» հյուրանոցային համալիրի, «Դիլիջան առողջարան» ՓԲԸ-ի

«ՄԵՖ ինտերնեշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ի տնօրենների հետ: Նոր պայմանագրեր ձեռք բերելու համար նախագիծ է ուղարկվել Դիլիջանի «Երկրագիտական» թանգարանի, «Հ.Շարամբեյանի անվան Ժողովրդական արվեստի թանգարանի Դիլիջանի մասնաճյուղ»-ի, «ԲԵՍԹ ՎԵՍՏԵՐՆ ՓԼԱՍ ՓԱՐՄԱԴԱՅՍ ՀՈՏԵԼ ԴԻԼԻՋԱՆ» հյուրանոցային համալիրի տնօրեններին: Պատրաստվել և յոթ տասնյակ (78) գրություններ են ուղարկվել պրակտիկայի անցկացման վայրեր (այդ թվում մարզից դուրս գտնվող հաստատություններ՝ ՀՀ կենտրոնական բանկ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, Նասդաք ՕԷՄԵՔՍ Արմենիա ֆոնդային բորսա և այլն): Գրություններն ուղարկվել են և՛ գրավոր (առձեռն), և՛ էլեկտրոնային տարբերակներով:

2. Պրակտիկա

2.1 Մանկավարժական պրակտիկաներ . (7-ը՝ ավարտված, 1-ը՝ շարունակելի)

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հոգեբանություն», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Պատմություն» և Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» չորրորդ կուրսի ուսանողները (թվով 177) մինչև մարտի 11-ը իրենց տեսական գիտելիքները ամրապնդել և մանկավարժական կարողություններ, հմտություններ են ձեռք բերել մարզի տարբեր հանրակրթական դպրոցներում (առաջին անգամ մանկավարժական պրակտիկան կազմակերպվել է նաև «Դիլիջանի կենտրոնական դպրոց»-ում, այդ հնարավորության մասին ուսանողներն իրազեկվել են մասնաճյուղում դպրոցի տնօրեն Ն.Դալուզյանի և աշխատակիցների հետ տեղի ունեցած հանդիպման, ինչպես նաև մասնաճյուղի կայքէջում տեղադրված հայտարարության միջոցով, դպրոցի կողմից պրակտիկանտ ուսանողների ընտրությունը կատարվել է հարցազրույցի միջոցով): Արտադրական (մանկավարժական) պրակտիկայի անցկացումը կազմակերպվել է մասնագիտական ամբիոնների կողմից հաստատված ծրագրային պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով ուսանողների տեսական պատրաստվածությունն ու գործնական կարողությունները: Մանկավարժի մասնագիտական գործունեության մեջ ուսանողներն ընդգրկվել են պասիվ և ակտիվ շրջափուլերով՝ ապահովելով գործնական գիտելիքների աստիճանական յուրացման շարունակականությունն ու հետևողականությունը: Դպրոցներն աջակցել են մասնաճյուղի ուսանողներին, մանկավարժական կարողություններ ձեռք բերելու, հմտություններ ձևավորելու գործում: Պրակտիկայի ընթացքում ուսանողների հետ աշխատել են ինչպես դպրոցների մեթոդիստ ղեկավարները, այնպես էլ մասնագիտական ամբիոններից նշանակված ղեկավարները, մանկավարժներն ու հոգեբանները: Ընթացիկ խնդիրներին իրազեկ լինելու և հետագայում պրակտիկաների կազմակերպման գործընթացը բարելավելու համար Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի կողմից պարբերաբար իրականացվել են վերահսկողական աշխատանքներ, դպրոց կատարվող այցելությունների, դպրոցի տնօրենների հետ հեռախոսային քննարկումների, ուսանողների հետ հանդիպումների կազմակերպման եղանակներով: Պրակտիկայի վայրում ուսանողի կատարված աշխատանքներն արտահայտվել են օրագրային գրանցումներում, հաստատվել դպրոցի մեթոդիստ ղեկավարի, տնօրենի ստորագրությամբ, ինչպես նաև դպրոցի տնօրենի կողմից ուսանող պրակտիկանտի վերաբերյալ տրվող բնութագրով:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանողների (թվով 39) արտադրական (մանկավարժական) պրակտիկան ավարտվել է ապրիլի 26-ին, արդյունքները դեռևս ամփոփված չեն: Որակի ապահովման և արդյունավետության քննարկման տեսանկյունից ստուգարքը կկազմակերպվի հանձնաժողովով:

Առկա ուսուցման արտադրական (մանկավարժական) պրակտիկան շարունակվում է իրականացվել «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողների համար (ընդգրկում է երկրորդ կիսամյակի ողջ ընթացքը): Այս պրակտիկաները ծրագրի համաձայն կազմակերպվում են շարունակականության ու հաջորդականության սկզբունքներով, մասնագիտական կոմպետենտության աստիճանական զարգացման մեխանիզմով: Մասնաճյուղի կողմից որպես բազային դպրոցներ ընտրվել են Իջևանի Ս.Սարգսյանի անվ. թիվ 1 հիմնական դպրոցը և Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցը: Արդյունավետություն ապահովելու համար նշված դպրոցներում պրակտիկաները կազմակերպվում են ժամավճարային հիմունքներով (Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցին վճարելով 160.200 դրամ, իսկ Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցին՝ 108.000 դրամ):

2.2 Արտադրական պրակտիկաներ. (1-ը՝ ավարտված, 3-ը՝ շարունակելի, 2-ը՝ հունիսին)

«Տնտեսագիտության տեսություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողների արտադրական պրակտիկան, որը տևել է մինչև մարտի 11-ը կազմակերպվել է ՀՀ տարբեր վայրերում՝ համաձայն պրակտիկայի ղեկավարի կողմից ներկայացված հաստատությունների ցանկի: Հաստատությունների մի մասի ընտրությունը պայմանավորված է եղել ուսանողների ավարտական աշխատանքների թեմաներով, որպեսզի վերջիններս գործնական կարողություններ ձեռք բերելու հետ հնարավորություն ունենան խորացնելու իրենց գիտելիքները ուսումնասիրվող թեմաների արդի խնդիրների և մտեցումների վերաբերյալ: Մի շարք ընկերություններ պրակտիկանտների ընտրությունը կազմակերպել են մրցույթային սկզբունքով (ՀՀ կենտրոնական բանկի Դիվիզանի ուսումնահետազոտական կենտրոն, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, Նասդաք ՕԷՄԵՔՍ Արմենիա ֆոնդային բորսա, Արդշինբանկ ՓԲԸ, Կոնվերս բանկ ՓԲԸ և այլն): Պրակտիկայի ծրագիրը ղեկավարի կողմից քննարկվել է պրակտիկայի անցկացման յուրաքանչյուր հաստատության ղեկավարի հետ, հստակեցվել ծրագրային պահանջներն ու կատարվելիք աշխատանքները:

Արտադրական (մանկավարժական) և արտադրական պրակտիկաների ստուգարքները կազմակերպվել են մարտի 13-ից մինչև 16-ը՝ համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի: Սահմանված ժամնետում ուսանողները ներկայացրել են ծրագրային պահանջներին համապատասխան պրակտիկայի ժամանակահատվածում կատարած աշխատանքները, քննարկել ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: Հաշվետվությունները ներկայացվել են բուհի կողմից սահմանված ձևաչափով (պրակտիկայի օրագրեր):

Առկա ուսուցման արտադրական պրակտիկաները շարունակվում են իրականացվել «Պատմություն», «Սերվիս», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի համար (տևողությունը մինչև ա/թ մայիսի 29-ը): Պրակտիկաները ծրագրի

համաձայն կազմակերպվում են մասնաճյուղում, մարզի հյուրանոցներում, ռեստորաններում, թանգարաններում և այլն:

2.3 Ուսումնական պրակտիկաներ (1-ը՝ ավարտված, 4-ը՝ շարունակելի, 1-ը՝ հունիսին)

«Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողները ուսումնական պրակտիկան անցկացրել են փետրվարի 11-ից մինչև 22-ը: Պրակտիկայի ընթացքում ուսանողներն ուսումնասիրել են հայկական ավանդական զարդարվեստի տեսակները և դրանց դրսևորումները հայ ճարտարապետության մեջ, տարազաձևերում և դեկորատիվ կիրառական առարկաների պատրաստման մեջ, քննարկումներ կատարել ավարտական աշխատանքների էսքիզների շուրջ: Ծրագրային պահանջներին համապատասխան ուսումնասիրությունները կատարվել են Գոշ, Կիրանց, Ակնաղբյուր, Այգեհովտ գյուղերում և քաղաք Իջևանում:

Առկա ուսուցման ուսումնական պրակտիկաները շարունակվում են իրականացվել «Պատմություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի, «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողների համար (տևողությունը մինչև ա/թ մայիսի 29-ը): Պրակտիկաները ծրագրի համաձայն կազմակերպվում են ՀՀ թանգարաններում և պատմամշակութային հուշարձաններում:

3. Իրականացված հարցումներ (պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքը).

Հարցումները իրականացվել են «Պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցաթերթ»-ով, որը մշակվել է Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի կողմից, երկրորդ կիսամյակի ընթացքում՝ նկատի առնելով պրակտիկայի տեսակը, ծրագրով սահմանված վերջնարդյունքները և արտաքին շահակիցների առաջարկությունները (*Հավելված 1, Հավելված 2*): Հարցաթերթի բաց հարցերի արդյունքները ներկայացվում են ստորև (առավել ամբողջական կներկայացվի 2018-2019 ուստարվա ավարտին):

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցաթերթի պատասխաններից

Հարցաթերթի բաց հարցերով ակնկալել ենք հավաքագրել գործատուների կարծիքները մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանկավարժական ընդգծված որակների վերաբերյալ, ունենալ հստակ առաջարկություններ ուսումնառության գործընթացի բարելավման, ուսումնառողների գործնական կարողությունների զարգացման ուղղությամբ:

Ըստ արտաքին շահակիցների, մանկավարժական պրակտիկայի ընթացքում պրակտիկանտների մոտ **որպես առավելություններ և ուժեղ կողմեր** առանձնացվել են.

1. մասնագիտական անհրաժեշտ գիտելիքների իմացությունը, մասնագիտական պատրաստվածությունը,
2. պատասխանատու և արժևորող վերաբերմունք իրենց մասնագիտության և կրթության նկատմամբ ընդհանրապես,
3. պարտաճանաչությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, նախաձեռնողականությունը, հետաքրքրասիրությունը, նպատակալացությունը, խելացիությունը,
4. համբերատար և ակտիվ լսելու, հաղորդակցվելու բավականին լավ հմտությունները, որի շնորհիվ նրանք կարողանում են այլ մարդկանցից սովորել հեշտությամբ,
5. աշակերտների նկատմամբ պատշաճ վերաբերմունքը, դասապրոցեսում բոլորին ընդգրկելու կարողությունը, մատչելի բացատրելու և ճիշտ մեկնաբանելու կարողությունը, գիտելիքներն անկաշկանդ փոխանցելու կարողությունը,
6. դասը պլանավորելու և դասի պլան կազմելու կարողությունը,
7. ազատ խոսքի և ստեղծագործական մտքի կարողությունները, լավագույն ձևով դրսևորվելու ցանկությունը,
8. շրջապատին ինտեգրվելու, կոլեկտիվում աշխատելու հմտությունը,
9. ինքնանդրադարձման, կառուցողական քննարկման տրամադրվածությունը, հարգալից և շնորհակալական վերաբերմունքը գործընկերների նկատմամբ,
10. ժամանակակից մեթոդների իմացությունն ու կիրառությունը,
11. տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունները,
12. էթիկայի կանոնները պահպանելու կարողությունը:

Ըստ արտաքին շահակիցների, մանկավարժական պրակտիկայի ընթացքում պրակտիկանտների մոտ **մասնագիտական և մանկավարժական հմտությունները բարելավելու** ընդգծված առաջարկներն են.

1. ուշադրությունը առավել կենտրոնացնել դասավանդման ժամանակակից մեթոդներին,
2. հարստացնել գիտելիքների պաշարը, հնարավորինս օգտագործել մասնագիտական գրականություն,
3. օրվա դասի պլանի պարտադիր առկայությունը,
4. մշտական և հետևողական աշխատանքի իրականացումը,
5. ԲՈՒՀ-ում իրականացնել գործնական աշխատանքներ, մասնագիտական կարողությունների, հմտությունների ձևավորման և զարգացման նպատակով,
6. պրակտիկայի ժամանակահատվածի երկարացումը:

Հարցման շրջանակներում կարևորվել է նաև պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավման համար արտաքին շահակիցների կարծիքները և առաջարկները: **Հարցման մասնակիցների առաջարկներից են.**

1. երկարացնել պրակտիկայի տևողությունը, պրակտիկան կազմակերպել երկու փուլով,
2. պրակտիկայի ընթացքում համալսարանում դասեր չկազմակերպել,

3. ուժեղացնել վերահսկողության մեխանիզմները, ակտիվացնել պրակտիկայի ղեկավարի համագործակցությունը դպրոցի հետ, մասնակցությունը ողջ պրոցեսին, ինչպես նաև պրակտիկայի ղեկավարի և դասավանդող ուսուցչի համագործակցությունը,

4. բաց դասեր իրականացնել դասախոս-ուսանողների, աշակերտ-ուսուցիչների համագործակցությամբ,

5. կատարել լսումներ,

6. պրակտիկայի ընթացքում պրակտիկանտ ուսանողների միջոցով այց կազմակերպել համալսարան,

7. պրակտիկայի պաշտպանությանը մասնակից դարձնել մեթոդիստ ուսուցիչներին,

8. վերանայել պրակտիկանտի օրագրի կառուցվածքը՝ ելնելով պրակտիկայի նպատակից և ակնկալվող վերջնարդյունքներից, բարելավման համար օրագրում ավելացնել պրակտիկանտի ինքնադրադարձման մաս, որտեղ ուղղորդող հարցերի միջոցով նա կներկայացնի իր ձեռքբերումները և կտրամադրի դրանց համար վկայություններ, դա կօգնի ուսանողներին զարգացնել իրենց ինքնադրադարձման և սեփական փորձառությունը վերլուծելու, գնահատելու հմտությունները,

9. տարվա վերջում գրույցներ և քննարկումներ իրականացնել դպրոցներում,

10. պրակտիկայից հետո նրանց կցել ինստիտուտներին /դպրոց կամ այլ/ և ապահովել նրանց համար իրենց պրակտիկայի վայրի շարունակական հասանելիություն, որպեսզի նրանք նաև կարողանան նախաձեռնություններով հանդես գալ՝ արդեն լինելով ծանոթ միջավայրին և իրականացվող ծրագրերին, մոտեցումներին: Թերևս այսպես նրանք կկարողանան երբեմն նաև աջակցել, ներդրում ունենալ իրենց մասնագիտական ոլորտում, լինելով ժամանակից և թարմ մոտեցումներով երիտասարդներ՝ նրանք կարող են փոփոխություններ բերել, որտեղ դրա կարիքը կա, մյուս կողմից ձեռք բերել մասնագիտական ինքնավստահություն և ավելի պատրաստ լինել աշխատաշուկա մտնելուն:

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ
արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցաթերթի պատասխաններից**
/արտադրական պրակտիկա/

Ըստ արտաքին շահակիցների, արտադրական պրակտիկայի ընթացքում պրակտիկանտների մոտ **որպես առավելություններ և ուժեղ կողմեր** առանձնացվել են.

1. պատասխանատվությունը, կարգապահությունը և աշխատասիրությունը,

2. առաջադրված խնդիրները կատարելու պատրաստվածությունը, վերլուծելու կարողությունը, որոնք գնահատվել են գերազանց (*Դիլիջանի ուսումնասիտագոտական կենտրոն*),

3. ազատ և անկաշկանդ շփումը:

Ըստ արտաքին շահակիցների, արտադրական պրակտիկայի ընթացքում պրակտիկանտների համար անհրաժեշտ են **օտար լեզուներից անգլերենի և ռուսերենի իմացությունը**:

Հարցման շրջանակներում կարևորվել է նաև պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավման համար արտաքին շահակիցների կարծիքները և առաջարկները: **Հարցման մասնակիցների առաջարկներից են.**

1. երկարացնել պրակտիկայի տևողությունը,
2. պրակտիկայից առաջ ապահովել բանկերի և բանկային գործի մասին տեսական գիտելիքներ («Արարատբանկ» ԲԲԸ),
3. պրակտիկայից առաջ ծանոթացնել գործող օրենսդրությանը և բանկային տեղեկագրերին,
4. բարձրացնել օտար լեզուների կիրառման կարողությունը,
5. արդյունքները վերջնական տեսքի բերելու համար կարևոր է, որ հետագայում ուսանողը շարունակի այդ ուղղությամբ սկսած աշխատանքները և գիտական ղեկավարի հետ պարբերական հանդիպումների միջոցով կատերելագործի հետազոտության արդյունքները (*Դիլիջանի ուսումնասիտագոտական կենտրոն*):

Հավելված 1

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

Հարգելի՛ շահակիցներ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կարևորում է Ձեր կարծիքը և վստահեցնում, որ Ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու մասնաճյուղի գործունեությունը:

Հետազոտությունն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, իսկ 1-ը ամենացածր գնահատականն է:

Թիվ	Գնահատեք մեր պրակտիկանտ-ուսանողների	Գնահատականը
1.	մասնագիտական գիտելիքների տեսական իմացությունը	գիտելիք
2.	մանկավարժի գործունեությունը հասկանալու, քննարկելու և մեկնաբանելու կարողությունը	գիտելիք
3.	աշխատանքային գործունեության վերջնարդյունքները, համապատասխան նպատակները, խնդիրները, քայլերը և իրականացման մեթոդները որոշելու (պլանավորելու) կարողությունը	հմտություն
4.	մասնագիտական ոլորտին առնչվող տեղեկատվություն, փաստարկներ, գաղափարներ և խնդիրներ (և դրանց լուծումներ) ներկայացնելու և բացատրելու կարողությունը	կարողություն

5.	գործունեություն իրականացնելու ընթացքում ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունը	կարողություն
6.	նախաձեռնության և ստեղծագործական կարողությունների ցուցաբերումը	կարողություն
7.	պրոբլեմային իրադրություններում (եթե այդպիսիք եղել են) լուծման եղանակներ ու միջոցներ առաջադրելու կարողությունը	կարողություն
8.	տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունը	կարողություն
9.	կրթության որակի չափանիշներն (գիտելիք, կարողություն, հմտություն) ապահովելու կարողությունը	կարողություն
10.	արդյունքների վերաբերյալ դատողություններ անելու համար տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու կարողությունը	կարողություն
11.	աշխատանքի նկատմամբ պատասխանատվությունը և մանկավարժական հմտությունների կատարելագործումը	հմտություն
12.	էթիկայի նորմերին և ներքին կարգապահական կանոններին հետևելը	կարողություն
13.	Գնահատեք մանկավարժական /մասնագիտական/ պրակտիկայի կազմակերպման գործընթացը:	
14.	ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանկավարժական ի՞նչ երեք առավելություններ կցանկանայիք նշել.	
15.	ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանկավարժական հմտությունները բարելավելու ի՞նչ առաջարկներ կցանկանայիք նշել .	
18.	Ի՞նչ առաջարկներ ունեք պրակտիկայի կազմակերպման գործընթացը բարելավելու համար.	

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժին

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ
արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության**

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

Հարգելի՛ շահակիցներ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կարևորում է Ձեր կարծիքը և վստահեցնում, որ Ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու մասնաճյուղի գործունեությունը:

Հետազոտությունն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, իսկ 1-ը ամենացածր գնահատականն է:

Թիվ	Գնահատեք մեր պրակտիկանտ-ուսանողներին.	Գնահատականը
1.	պրակտիկայի վայրում նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու կարողությունը	
2.	աշխատանքային միջավայրում մասնագիտորեն գործելու կարողությունը	
3.	գործնական առաջադրանքի բովանդակությունը ճիշտ ընկալելու կարողությունը	
4.	առաջադրանքները կատարելու համար տարբեր աղբյուրներից տեղեկատվություն	

	հավաքելու և ճիշտ օգտագործելու կարողությունը	
5.	գործնական առաջադրանքների կատարման ձևերի և կիրառվող մեթոդների իմացությունը	
6.	գործնական առաջադրանքի կատարման ինքնուրույն եղանակներ առաջադրելու կարողությունը	
7.	փաստաթղթեր կազմելու կարողությունը*	
8.	առաջադրանքները սահմանված ժամանակահատվածում կատարելու կարողությունը	
9.	աշխատակազմի հետ մասնագիտական հաղորդակցման կարողությունը	
10.	քննարկումներին մասնակցելու և համագործակցելու կարողությունը	
11.	օտար լեզվի կիրառման կարողությունը*	
12.	մասնագիտական գիտելիքների տեսական իմացությունը	
13.	Աշխատակիցների դիտողությունը ընդունելու և ճիշտ հետևություն անելու կարողությունը	
14.	մասնագիտական և անձնական զարգացման ձգտումը	
15.	Էթիկայի նորմերին և ներքին կարգապահական կանոններին հետևելը	
16.	Գնահատեք մասնագիտական պրակտիկայի կազմակերպման գործընթացը:	
17.	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների ի՞նչ որակներ կցանկանայիք փոխել.	
18.	Օտար լեզուներից ո՞րի իմացությունն է անհրաժեշտ Ձեր աշխատավայրում.	
19.	Ի՞նչ առաջարկներ ունեք պրակտիկայի կազմակերպման գործընթացը բարելավելու համար.	

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժին

* Լրացնել անհրաժեշտության դեպքում